Համաձայն «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
Վարչության 17.04.2023 թվականի որոշման
Գործում է 18.05.2023 թվականից

# ABB – ԱՐՏՈՆՅԱԼ ԺԱՄԿԵՏՈՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՐՏ

ֆիզիկական անձանց արտոնյալ ժամկետով տրամադրվող վարկային քարտերի տրամադրման պայմաններն ու սակագները (Սեփական ռեսուրսներով)

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **1.** | **Արտոնյալ ժամկետով վարկային քարտերի հիմնական պայմաններ** | | | | |
| 1.1 | Արտոնյալ ժամկետով Վարկային քարտերի տեսակներ[1] | VISA Classic/ Mastercard Standard | Visa Gold/ Mastercard Gold | Visa Platinum/ Mastercard Platinum | Visa Infinite/ MC World Elite |
| 1.2 | Վարկային քարտի արժույթ | **ՀՀ դրամ<br>ԱՄՆ դոլար<br>Եվրո** | | | |
| 1.3 | Քարտի գործողության ժամկետ | 5 տարի | | | |
| 1.4 | Քարտի թողարկում | անվճար | | | |
| **2.** | **Վարկային գծի հիմնական պայմաններ** | | | | |
| 2.1 | Վարկի ձևակերպման վայր | Բանկի գլխամասային գրասենյակ և մասնաճյուղեր | | | |
| 2.2 | Հաճախորդի նպատակային խումբ | Ֆիզիկական անձինք, ովքեր ունեն կանոնավոր եկամուտ/հավաստող փաստաթղթեր՝տեղեկանք աշխատավայրից, քաղվածք, համաձայնագրեր, պայմանագրեր/ | | | |
| 2.3 | Վարկային գծի ժամկետ | 5 տարի | | | |
| 2.4 | Վարկային գծի վճարման արտոնյալ ժամկետ | Մինչև 51 օր (մեկ ամիս + 20օր) | | | |
| 2.5 | Տարեկան անվանական տոկոսադրույք (ֆիքսված) | ՀՀ դրամ-19.5%<br>ԱՄՆ դոլար-17%<br>Եվրո-15% | | ՀՀ դրամ-18.5%<br>ԱՄՆ դոլար-16%<br>Եվրո-14% | |
| | Բանկի քարտով աշխատավարձ ստանալու դեպքում կիրառվում է սահմանված տոկոսադրույքից զեղչ՝ -0.5% | | | | |
| 2.6 | Տարեկան փաստացի տոկոսադրույք | 21.34%՝ ՀՀ դրամի դեպքում,<br>18.39%՝ ԱՄՆ դոլարի դեպքում,<br>16.07%՝ Եվրոյի դեպքում | | 20.15%՝ ՀՀ դրամի դեպքում,<br>17.22%՝ ԱՄՆ դոլարի դեպքում,<br>14.93%՝ Եվրոյի դեպքում | |
| 2.7 | Վարկային գծի տեսակ | Վերականգնվող վարկային գիծ | | | |
| 2.8 | Վարկային գծի նվազագույն սահմանաչափ | 200,000ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ | | | |
| 2.9 | Վարկային գծի առավելագույն սահմանաչափ | A-B սեգմենտի դեպքում՝ միջին եկամտի[2] մինչև 6-պատիկը, բայց ոչ ավել քան 10 մլն ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ | | | |

[1] Տրամադրվում է նոր վճարային քարտով

[2] Վերջին 6 ամսվա ընթացքում ստացված զուտ աշխատավարձի և դրան հավասարեցված վճարների միջին ամսական մեծություն: Եթե վերջին 6 ամիսների ընթացքում աշխատանքային փորձը փոքր է 6 ամսից, բայց գերազանցում է 3 ամիսը, ապա աշխատավարձի և դրան հավասարեցված վճարների միջին ամսական մեծության հաշվարկի համար համապատասխան ամիսների ընթացքում ստացված աշխատավարձի և դրան հավասարեցված վճարների ընդհանուր գումարը բաժանվում է 6-ի:

| | | |
|---|---|---|
| | | C-E սեգմենտի համար՝ միջին եկամտի[2] մինչև 3-պատիկը, բայց ոչ ավել քան 10 մլն ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ |
| 2.10 | Վարկային գծի չօգտագործված մասի նկատմամբ հաշվեգրվող տոկոսադրույք | 0% |
| 2.11 | Վարկային գծի տրամադրման եղանակ | Անկանխիկ, վարկային գիծը տրամադրվում է քարտային հաշվին |
| 2.12 | Վարկային գծի վաղաժամկետ մարում | Թույլատրվում է, տույժեր և տուգանքներ չկան |
| 2.13 | Վարկային հայտի ուսումնասիրության ժամկետ | 1աշխատանքային օր |
| 2.14 | Վարկի տրամադրման մասին դրական որոշման գործողության առավելագույն ժամկետ | Վարկի տրամադրման դրական որոշման կայացման օրվանից 15 օրացուցային օր |
| 2.15 | Վարկառուին վարկի տրամադրման ժամկետ | Վարկային պայմանագրերը ստորագրելուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում |
| **3.** | **Վարկային գծի և տոկոսագումարի մարման եղանակ** | |
| 3.1 | Քաղվածքի ձևավորման օր/մարման օր | Յուրաքանչյուր ամսվա վերջին օրացուցային օր (ոչ աշխատանքային օրվա դեպքում՝ հաջորդ աշխատանքային օր) |
| 3.2 | Պարտադիր վճարման ենթակա գումար և ժամկետ | Քաղվածքում արտացոլված օգտագործված գումարի 10%, որը պետք է վճարվի յուրաքանչյուր ամիս մինչև ամսի 20-ը ներառյալ |
| 3.3 | Տոկոսների հաշվարկում | Մեկ ամսվա ընթացքում գծի սահմաններում օգտագործված գումարները վճարման արտոնյալ ժամկետում ամբողջությամբ մարելու դեպքում օգտագործված գումարների վրա տոկոս չի հաշվարկվում:<br>Մեկ ամսվա ընթացքում գծի սահմաններում օգտագործված գումարները վճարման արտոնյալ ժամկետում ամբողջությամբ չմարելու դեպքում օգտագործված գումարների վրա օգտագործման առաջին իսկ օրվանից հաշվարկվում է տոկոս, որը հաշվարկվում է նաև հետագայում Օգտագործվող/ված գումարների նկատմամբ, որը ենթակա է մարման: |
| 3.4 | Վարկառուի կողմից պարտավորությունները չկատարելու դեպքում տույժեր | Ժամկետանց վարկի նկատմամբ շարունակում է Պայմանագրով նախատեսված տոկոսի հաշվարկումը:<br>Տույժ՝ ժամկետանց Վարկի և տոկոսագումարի 0.13 %-ի չափով ժամկետանցի յուրաքանչյուր օրվա համար |
| 3.5 | Վարկային գծի մայր գումարի մարում | Ժամկետի վերջում |
| **4.** | **Բանկի միջնորդավճարներ, միջոցների կանխիկ տրամադրում** | |
| 4.1 | Հայտի ուսումնասիրության վճար | 0 ՀՀ դրամ |
| 4.2 | Վարկային գծի տրամադրման միանվագ միջնորդավճար | 0 ՀՀ դրամ |

[2] «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի քարտով աշխատավարձի ստացումը 6 ամսից պակաս լինելու դեպքում՝ միջին եկամտի հաշվարկման համար հիմք են ընդունվում հետևյալ մեծությունները՝ Հայբիզնեսբանկ ՓԲԸ-ի քարտով փաստացի ստացված մեծության հարաբերակցությունը համապատասխան ամիսներին և մնացած ամիսների համար՝ այլ բանկերի քաղվածքներում կամ տեղեկանքում նշված մեծությունը:

| | | |
|---|---|---|
| 4.3 | Վարկային գծի սպասարկման ամսական միջնորդավճար | 0 ՀՀ դրամ |
| 4.4 | «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ բանկոմատներից կանխիկի տրամադրում | 2% |
| 4.5 | «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ մասնաճյուղերից POS terminal-ով կամ առանց քարտի կիրառության կանխիկի տրամադրում | 2.2% |
| 4.6 | Այլ բանկերի (այդ թվում՝ Արքա համակարգի) բանկոմատներից և կանխիկացման կետերից կանխիկի տրամադրում | 2.5%,նվազագույնը՝ 2000 ՀՀ դրամ |
| **5.** | **Միջոցների փոխանցում (ներառյալ հաճախորդի հաշիվների միջև)** | |
| 5.1 | Բանկի մասնաճյուղերում քարտային հաշվից ներբանկային և միջբանկային փոխանցում («ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ համակարգում, ՀՀ և ԱՀ այլ բանկեր) | 2.2% |
| 5.2 | Ինտերնետ/Մոբայլ բանկինգ հավելվածներով փոխանցում (հաշվի համարով,քարտի համարով կամ կոնտակտային տվյալով ) | 2% |
| 5.3 | «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ Բանկոմատով փոխանցում | 2% |
| 5.4 | Քարտի միջոցով էլեկտրոնային դրամապանակի համալրում | 2% |
| 6. | Միջոցների կանխիկ մուտքագրում քարտային հաշվին | Անվճար |
| 7. | Քարտով գործարքների վերաբերյալ կարճ հաղորդագրության ուղարկում (SMS)[3] | 0 ՀՀ դրամ |
| 8 | Այլ պայմաններ | Համաձայն «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ կողմից ֆիզիկական անձանց մատուցվող ծառայությունների սպասարկման Վճարային դեբետային քարտերի սակագների և պայմանների |
| **8.** | **Վարկառուի նկատմամբ հիմնական պահանջներ** | |

[3] 500 ՀՀ դրամը գերազանցող գործարքների համար

| | | |
|---|---|---|
| 8.1 | Վարկառուի եկամուտները | Աշխատավարձ և/կամ դրան հավասարեցված պարտադիր վճարներ |
| 8.2 | Կարգավիճակ | • ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձ<br>• Վարկառուն վերջին աշխատավայրում առնվազն 3/երեք/ ամիս պետք է հանդիսանա կազմակերպության աշխատակից |
| 8.3 | Տարիք | Վարկային հայտը ներկայացնելու պահին Վարկառուի տարիքը պետք է լինի նվազագույնը՝ 18 տարեկան, իսկ վարկի մարման պահին չպետք է գերազանցի 63 տարեկանը |
| 8.4 | Վարկառուի վարկային պատմությանը ներկայացվող պահանջներ | Վերջին 12 ամիսների ընթացքում բոլոր (մարված և գործող) վարկերի ժամկետանց օրերի ընդհանուր հանրագումարը չպետք է գերազանցի 36 օրացուցային օրը, ընդ որում մեկ ամսվա ուշացումների քանակը չպետք է գերազանցի 6 օրացուցային օրը: Վարկառուի գործող երաշխավորությունների դասը՝ ստանդարտ: |
| 9 | ***Դիմում-հայտի մերժումը*** | ● Հաճախորդի կողմից չեն ներկայացվել Վարկային գիծ ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը<br>● Հաճախորդը չի բավարարում Բանկի նվազագույն պայմաններին/պահանջներին<br>● Հաճախորդի անունով բոլոր բանկերում և վարկային կազմակերպություններում առանց գույքի գրավի, ապառիկի (ֆակտորինգի) և իրավունքի գրավի ապահովվածությամբ գործող և սույն պայմանների համաձայն նոր տրամադրվող վարկային գծի սահմանաչափի հանրագումարը չպետք է գերազանցի վերջին 6 ամսվա ընթացքում ստացված աշխատավարձի և դրան հավասարեցված վճարների միջին ամսական մեծության 15 ապատիկը<br>● Վարկունակության գնահատման արդյունքում պարզվել է, որ հաճախորդը վարկունակ չէ<br>● ՀՀ ԿԲ Վարկային ռեգիստր և/կամ ԱՔՌԱ վարկային բյուրո հարցման արդյունքում պարզվել է, որը Հաճախորդը ունի բացասական վարկային պատմություն:<br>● Վարկավորման գործընթացի արդյունքում հայտնի է դարձել Հաճախորդի վերաբերյալ այնպիսի տեղեկություն, որը կասկածի տակ է դնում Հաճախորդի կողմից ներկայացված տեղեկությունը կամ Վարկային գծի վերադարձելիությունը |
| 9.1 | Հաճախորդի կողմից վարկային պարտավորությունների չկատարման դեպքում | **Ժամկետանց տոկոսների և վարկային գծի յուրաքանչյուր ուշացված օրվա համար Բանկը վարկառուից գանձում է տույժ՝ չվճարված (ժամկետանց) Վարկային գծի և տոկոսագումարի 0.13% տոկոսի չափով:**<br>• ***Ժամկետանց պարտավորությունները կապարելու դեպքում մարումներն իրականացվում են հետևյալ հերթականությամբ՝***<br>***1) Տույժ/տուգանքներ,***<br>***2) Տոկոսագումարներ,***<br>***3) Մայր գումար*** |
| | | *ՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՎԱՐԿԱՏՈՒՆ ՄԻՆՉԵՎ 7 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐ ՀԵՏՈ ԱՅԴ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ՎԱՐԿԱՌՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ:*<br>ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՁԵԶ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ: |
| **9.2** | **Վարկային հաշվի գծով քաղվածքի/տեղեկանքի տրամադրում** | Համաձայն բանկում գործող սակագների |
| **10.** | **Ապահովություն** | |
| 10.1 | Ապահովություն | Եկամտի ստացման իրավունք և/կամ Քարտային հաշվից բխող դրամական պահանջի իրավունքի գրավ |
| | **Վարկային գծի ձևակերպման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ** | |
| | Անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր կամ նույնականացման քարտ) | |
| | Սոցիալական քարտ կամ հանրային ծառայության համարանիշ, բացակայության դեպքում՝ տեղեկանք համապատասխան մարմնից (նույնականացման քարտ ներկայացնելու դեպքում չի պահանջվում) | |
| | • Բանկային քաղվածք աշխատավարձային քարտային հաշվից՝ նվազագույնը վերջին 6 ամսվա կտրվածքով | |

| | | |
|---|---|---|
| | • Հայբիզնեսբանկ ՓԲԸ-ի քարտով աշխատավարձի ստացումը 6 ամսից պակաս լինելու դեպքում՝ ներկայացվում է նաև այլ բանկում նախկինում սպասարկված աշխատավարձային քարտային հաշվի քաղվածքը կամ<br>• եթե հաճախորդը վերջին 6 ամիսների ընթացքում աշխատավարձը չի ստացել բանկային քարտով, ապա ներկայացնում է զբաղվածության և եկամուտների մասին տեղեկանք՝ գործատուի պաշտոնական բլանկի վրա տպված, որտեղ նկարագրված կլինի տվյալ ընկերությունում զբաղեցրած պաշտոնի, աշխատանքային ստաժի, ինչպես նաև վերջին 6 ամիսների ընթացքում փաստացի ստացված եկամուտների վերաբերյալ տեղեկատվություն | |
| | Այլ փաստաթղթեր ըստ անհրաժեշտության | |
| | | |
| | Գործատու կազմակերպությունների ըստ ոլորտների սեգմենտավորում | Համաձայն՝ Հավելված Սեգմենտավորում |

**Զգուշացում՝**
ՁԵՐ ԳՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՌՆԱԳԱՆՁՎԵԼ, ԵԹԵ ԴՈՒՔ ՉԿԱՏԱՐԵՔ ԿԱՄ ՈՉ ՊԱՏՇԱՃ ԿԱՏԱՐԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

**Ուշադրություն՝**
ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼԻՍ ՎԱՐԿԱՏՈՒՆ ՁԵԶ ԿՏՐԱՄԱԴՐԻ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԻ ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ, ՈՐՈՒՄ ԿՆԵՐԿԱՅԱՑՎԵՆ ՁԵԶ ՏՐԱՄԱԴՐՎԵԼԻՔ ՎԱՐԿԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ:

**Ուշադրություն՝**
ՎԱՐԿԱՅԻՆ ԳԾԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՉԻ ԿԱՐՈՂ ԳԵՐԱԶԱՆՑԵԼ ՀՀ ԿԲ ՍԱՀՄԱՆԱԾ ԲԱՆԿԱՅԻՆ ՏՈԿՈՍԻ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԻ ԿՐԿՆԱՊԱՏԻԿԸ:

**Ուշադրություն՝**
ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ, ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՊԱՏՇԱՃ ԿԵՐՊՈՎ ԵՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ Է՝ ՀԻՄՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՎ ՀԵՏԵՎՅԱԼ ԲԱՆԱՁԵՎԸ.

$$A=\sum_{n=1}^{N}\frac{K_n}{(1+i)^{\frac{D_n}{365}}}$$

**Որտեղ՝**

**i** - տարեկան փաստացի տոկոսադրույքը (APR)
**A** - կրեդիտի գումարը (կրեդիտավորողի կողմից սպառողին տրամադրված կրեդիտի սկզբնական գումարը)
**n** – կրեդիտի մարմանն ուղղված վճարի թիվը
**N** - կրեդիտի մարմանն ուղղված վերջին վճարի թիվը
**Kn**-կրեդիտի մարմանն ուղղված n-րդ վճարի գումարը
**Dn**-կրեդիտի տրամադրման օրից մինչև կրեդիտի մարմանն ուղղված n-րդ վճարի կատարման օրն ընկած ժամանակահատվածը՝ արտահայտված օրերի թվով
**i** –ն՝ տարեկան փաստացի տոկոսադրույքը, կարող է հաշվարկվել, եթե հավասարման մյուս տվյալները հայտնի են կրեդիտավորման պայմանագրից կամ այլ կերպ

**Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման օրինակ՝**

- Վարկային գծի գումար՝ 1,000,000 ՀՀ դրամ
- Ժամկետ՝ 60 ամիս
- Տարեկան տոկոսադրույք՝ 19.5%

**Տարեկան փաստացի տոկոսադրույքը կազմում է՝ 21,34%**

ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐՈՎ,ՄԱՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ և ԱՅԼ ՕԺԱՆԴԱԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԺԵՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ՝ ՎԱՐԿԻ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՏԱՐԲԵՐ ԼԻՆԵԼ ՎԵՐՈՆՇՅԱԼ ՕՐԻՆԱԿԻՑ:

ԲԱՆԿԸ ԿԱՐՈՂ Է ՄԻԱԿՈՂՄԱՆԻՈՐԵՆ ՓՈՓՈԽԵԼ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ՝ ԱՅԴ ՄԱՍԻՆ ԱՌՆՎԱԶՆ 7 ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՕՐ ԱՌԱՋ ԾԱՆՈՒՑԵԼՈՎ ՎԱՐԿԱՌՈՒԻՆ՝ ՎԱՐԿԸ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՉՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ,ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ:

**Ուշադրություն՝**
ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՎԱՐԿԱՏՈՒՆ 3 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐ ՀԵՏՈ ԱՅԴ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ:

**Ուշադրություն՝**
ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ԶԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ և ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ:

**Ֆինանսական տեղեկատու՝** www.fininfo.am

**Ուշադրություն՝**
ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ» ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ և ՁԵԶ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է: